



# ՈՐԿՐԱՄՈՆ ԹԱԳԱՒՈՐԸ

Ժամանակին՝ հեռո՛ւ պալատի մը մեջ կ'ապրէր որկրամոլ թագաւոր մը, որուն միակ հետաքրքրութիւնը ուտելն էր: Որքա՛ն շատ ուտէր, այնքան աւելին կը պահանջէր:

Իսկ ուտելիքի հանդէպ այսքա՛ն մեծ սիրոյն պատճառը, պատանի տարիքէն իրեն արտօնուած ըլլալն էր ուտել ամեն ինչ եւ ե՛րբ որ ուզէր:

Մինչ օրերը կ'անցնէին, թագաւորը աւելի ու աւելի կը գիրնար եւ խոշոր գնդակի մը նման կ'ուռէր:

Օր մըն ալ, երբ սովորականին պէս ճաշի ժամը հասած էր ու սպասաւորները մե՛ծ կաթսաներով ճաշերը կը պատրաստէին, ան տարբեր զգացում մը ունեցաւ եւ սկսաւ վեր բարձրանալ, լալո՛վ, ողբալով բարձրաճայն կանչեց, սակայն ոչ ոք




կրցաւ գինք կրկին դէպի վար քաշել: Ան արդէն պալատին պատուհանէն դուրս ելած էր ու խոշոր փուչիկի մը պէս կը թռչէր լեռներուն, ձորերուն, գետերուն ու անտառներուն վրայէն: Յանկարծ ան հասաւ մօտակայ գիւղերը, ուր հին տնակներ, խրճիթներ կային եւ խեղճ գիւղացիները անօթութենէ կը տառապէին եւ փողոցները անցորդներէն դրամ կը խնդրէին: Այդ տեղէն հեռանալով, հասաւ ուրիշ գիւղեր եւս ու ամեն տեղ նոյն երեւոյթը տեսաւ:

Այսպիսով՝ թագաւորը տեսաւ անօթութենէ տառապող մարդիկը, տխրեցաւ եւ ամօթ զգաց իր շատակերութենէն, որովհետեւ մինչ ինք կ'ուտէր ու կը գիրնար, մարդիկ կ'անօթենային եւ կը սնանկանային:

Երբ կրկին պալատին վրայէն կ'անցնէր, յանկարծ զգաց ուժ մը, որ գինք դէպի վար քաշեց եւ կրկին եկաւ իր պալատը:

Այդ օրուրէն ի վեր, թագաւորը հարստութիւնը փոխանակ իր ուտեստեղէնին յատկացնելու, սկսաւ արդարօրէն բաժնել սպասաւորներուն եւ մօտակայ գիւղերու բոլոր աղքատ բնակիչներուն, որոնք անգամ մըն ալ անօթի կամ սնանկ չէղան:

ԹԻՒԵ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇԽԵՆԱԿ-ՇԱՀՐԱՆԻ, ՆԿԱՐԱՍԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՐՈՇԵՆՆ



Գունաւորէ՛ ծիածանը:



Իւրաքանչիւր գոյնէն քանի՞ խնձոր կայ: Թուէ՛ եւ ստորեւ արձանագրէ՛ թիւը:



Ստորեւ շարուած պատկերները գունաւորէ՛, ապա իւրաքանչիւրը ձեւին համեմատ, կտրէ՛ եւ փակցո՛ւր համապատասխան սիւնակին մէջ:


# ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

*Յովհաննես Թումանյան*

Այն օրերուն, երբ որ կատուն խանութի տեր լաւ դերձակ էր

Շունը գլխուն գլխարկ չունէր:

Սակայն տան մէջ կար գառնուկի մորթ մը մնացած,

Չոր օր մըն ալ ուսին դրած, զարկաւ կատուին դուռը մաշած:

- Բարի օր քեզի, պարոն Փիսօ, Շատ պաղեցայ ի սէր Աստուծոյ, Ա՛ն այս մորթը, դուն ինձ համար գլխարկ մը կարէ գլխուս համար:

- Գլխո՛ւս վրայ, շնիկ եղբայր: Պարզ գործ է այս ինծի համար, Զու թանկագին խաթրիդ համար, Ուրբաթ օրը հրամմէ՛, ա՛ն:

- Վարպե՛տ Փիսօ, բարի՛ օր: Այս ի՛նչ ցուրտ է, անսովոր, Ա՛ն սա մորթը, բազմաչարչար, Մեր գառնուկին անյիշաչար, Գլխարկ կարէ գլխուս յարմար, վարձքդ գիտցիր գրպանիդ մէջ է,

Միայն յուսամ շատ չ՛ուշանար, Կու գամ կ՛անենմ օր մը յարմար:

- Գլխո՛ւս վրայ, պարոն Զուլուկ, Մուշտակ չէ որ նորահնար, Ո՛չ թեւ կ՛ուզէ, ո՛չ ալ արդուկ: Պա՛րզ գործ է այս ինծի համար, Ուրբաթ օրը հրամմէ՛, ա՛ն: Իսկ դրամի խօսքն ամօթ է, եղած չ՛եղած ի՛նչ մեծ ճար է, Մէկ գլխարկի դիւրին կար է:

Ուրբաթ առտու, պարոն շունը, Հագուած իր տաքուկ հագուստը, Դեռ նախաճաշ անգա՛մ չըրած, Ծա՛նր գլուխը մէկ ա՛ջ, մէկ ձա՛խ օրօրելով իրմէ առաջ,

Արտորանքով ելաւ գնաց, Կեցաւ դեռ զոց դրան դիմաց, Ուր հենն ի հեն ուժգին պռռաց. - Փիսոն ո՛ւր է: Գլխարկս ո՛ւր է:



- Բարի՛ եկար, շնի՛կ եղբայր,- ըսին շուրջէն մտերմաբար,- շունչ մը քաշէ՛, քիչ մը հանգչի՛ր, հիմա կու գայ: Դեռ շատ ուշ չէ:

Վարպետն եկաւ մուշտակ հագուած, Տեսաւ շունը մինակ կեցած.

- Ի՛նչ է, ուղեղը սառե՛ր է, Եկեր տան դիմաց կեցեր է: Մենք օրն ի բուն գործ ենք ըրեր, Այս գառնուկն ենք լաւ մը ջրեր, Որ պինդ կարուի իր գլխարկը, Զելլէ փախչի իր փարախը:

- Հօրդ օրհնած, այդպէս խօսէիր, բարկանալու ի՛նչ պետք կայ:

Դրամ որ տամ, ես գործ կ՛ուզեմ, Թէ ոչ, ըսէ՛ «Ես կարող չեմ»:

Գործ կ՛ընդունիս, չես կատարեր: Մորթը կ՛անեսս՝ չես կարեր:

Մէյ մըն ալ վրաս պռռաւ ու կանչել, չկայ աւելի մեծ մեղք,- ըսաւ շնիկն սրտմտաց, ձգեց գնաց գլուխը բաց...

Յաջորդ գալուն՝ դարձեալ պարապ: Փրթաւ լեզուին ամէն նուրբ կապ:

Ալ հինն ու նո՛րը, հայրն ու մա՛յրը Եւ եօթը պորտ նախահայրը, Խօսքով՝ աղտոտ, բառով՝ թթու.

- Վա՛յ շուն, քոսո՛տ: - Դուն գո՛ղ, կատո՛ւ:

Իրար մտան, առին-տուին, Մինչեւ՝ հասան ոստիկանին, Որ հագիւ բացած իր պայուսակ, Փիսօն արդէն վաղուց սնանկ, Ձգեց փախա՛ւ, եղաւ տնանկ...

Այս մեծ կռիւն այդ օրէն վերջ, Մնացեր է շան մտքին մէջ: Կատուի շուքն իսկ երբ կը տեսնէ, Յանկարծ կ՛ելլէ ան ինքն իրմէ: Կատուին ետեւէն կը վազէ, Անոր մուշտակն առնել կ՛ուզէ:

Իսկ նենգ կատո՛ւն, կը զարնէ թաթ, «փշի՛կ» կ՛ընէ մէկ աչքը փակ: Ծաղրով կ՛ըսէ՛ «Կը սպասես շա՛տ, Զրեմ՛ յետոյ կարեմ գլխարկ...»:

## ԲՈՅՍԵՐԸ ՋՈՒՐԻ ՊԷՏՔ ՈՒՆԻՆ



Անշո՛ւշտ պետք ունին, ճիշդ մարդոց եւ անասուններուն պես: Երբ բոյսերը բաւարար չափով ջուր չստանան, կը սկսին խամրիլ եւ վերջապէս կը մեռնին: Անոնք մարդոց նման երբ քրտնին՝ շոգիացած ջուրը փոխարինելու պետք կ'ունենան: Կարգ մը բոյսեր ուրիշներէ սուազ կը քրտնին, ինչպէս՝ շոճիի նման բարակ տերեւներ եւ կամ խնկունիին նման ոլորուած տերեւներ ունեցող բոյսերը:

Պարտիզպանը լաւ կը ճանչնայ այն բոյսերը, որոնք քիչ ջուրի պետք ունին: Եթէ օդը տաք ըլլայ, ան իր տունկերը կը ջրէ կանուխ առաւօտեան կամ երեկոյեան, որովհետեւ արեւին տակ ջուրի կաթիլները ոսպնեակի դէր կը կատարեն եւ կրնան տունկը չորցնել եւ այրել: